ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբեր 2022 թվականի N 89-Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայքնի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 06-ի «ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 79-Ա որոշումը:

3.Առաջարկել Գյուլագարակ համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4.Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		–	–	–
Օհանյան Ռուսլան		–	–	–
Սարգսյան Աիդա		–	–	–
Նալբանդյան Նարեկ		–	–	–
Մուրադյան Դավիթ		–	–	–
Պառավյան Գոհար		–	–	–
Այվազյան Սերյոժա		–	–	–
Մարիկյան Արմեն		–	–	–
Այվազյան Վրույր	–		–	–
Մագթաղյան Գնել	–		–	–
Քալաշյան Վարսենիկ	–		–	–
Թորոսյան Հրայր	–	–	–	բացակա
Տոնոյան Արտյոմ	–		–	–
Գրիգորյան Թամարա	–	–	–	բացակա
Խաչատրյան Ռոզիտա	–		–	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/